

Մոլտաւիա գաղթելն<sup>110</sup>, այնպէս որ 1652ին  
 Լեմպէրկի այնչափ բաղմաթիւ եւ ծաղկեալ հայ  
 գաղթականութենէն հազիւ 100 տուն մնաց  
 Լեմպէրկ:<sup>111</sup>

Բնականաբար թորոսելիչ զՀայոս դարձը-  
 նելու ցուցած եռանդանն համար Ռւրբանոս Բ  
 Քահանայապետէն իրեն եւ յաջորդացը համար  
 Արքեպիսկոպոս տիտղոսն ընդունեցաւ<sup>112</sup>, բայց  
 այս իրեն քիչ օգնեց, վասն զի Լեմպէրկի հայ  
 հասարակութիւնն քայքայած ու ցրուած էր եւ  
 ինքն էր հոլիւ մը, թէեւ ոչ՝ բոլորովին առանց  
 հօտի, սակայն գէթ շատ սակաւ ոչխարաց:

Յամին 1649, Ղասիլ Լուբուլ (Ալպանի-  
 դուլ, 1634—1653) իշխանին ժամանակ, Հայք  
 Սուլթանի Մետրապոլիին տպարանին մէջ Աւե-  
 տարան մը տպագրեցին՝ իրենց Մինաս եպիսկո-  
 պոսին հսկողութեան տակ<sup>113</sup>:

Նաեւ Սէրէթ քաղաքը շատ Հայք կային.  
 այսպէս 1653ին Ղուկէյցի անուամբ Հայ մը նոյն  
 քաղաքին մէջ տուն մը եւ խանութ ունէր, բայց  
 քիչ ետքն ստացուածքն ու քաղաքը թողուց:  
 Այս ստացուածքներն անցան յետոյ Ռատաուցի  
 Քալիսդրու եպիսկոպոսին, եւ յետոյ Փուզնա  
 վանքին: Զայս հաստատեց 1756ին Ապր. 17ին  
 կոստանդին Սեհան Ռաքովիցա իշխանն (1753  
 —1756), եւ նոյն վանքին տուաւ նաեւ մարտե-  
 աղատութիւն, եւ նոյն խանութին մէջ ըմպելիք  
 ծախելու իրաւունք՝ ազատ բոլորովին հարկէ<sup>114</sup>:

Յամին 1654<sup>115</sup>, ուստի Գէորգ Ստեփան  
 Մոլտաւիոյ իշխանին ժամանակ (1653—1658),